ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.06.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2022/213

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«РусАтомЭкспертиза» ՕՕՕ-ի ներկայացուցիչ՝ Ա. Արզումանյանի (լիազորագիր՝ տրված 12.05.2022թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 31.05.2022թ. թիվ 26/26-1/9965-2022 գրությամբ «РусАтомЭкспертиза» ՕՕՕ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 24.05.2022թ. թիվ Ե/13/1151-22 գրության հիման վրա, 31.05.2022թ. թիվ 26/26-1/9965-2022

գրությամբ նախաձեռնել է «РусАтомЭкспертиза» ООО-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«РусАтомЭкспертиза» ООО-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«РусАтомЭкспертиза» ООО-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

«Գտնում եմ, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ՀԻՄՔ 1

Համաձայն իրավահարաբերության պահին գործող «Գնումների մասին» ՀՀ օրենքի, այսուհետ՝ նաև Օրենք, 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա/ ենթակետի՝ Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված ... պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը ...

Իրավահարաբերության պահին գործող ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի, այսուհետ՝ նաև Կարգ, 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ մասերի համաձայն՝ 1. Նորմատիվ իրավական ակտերով սահմանված ժամկետները հաշվարկվում են տարիներով, ամիսներով, օրերով և ժամերով: 2. Տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն

օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը: 7. Օրերով հաշվարկվող ժամկետը լրանում է այդ ժամկետի վերջին օրը: 8. Եթե ժամկետի ավարտը պայմանավորված է վրա հասած իրադարձությամբ, ապա այն ավարտված է համարվում վրա հասած իրադարձության օրվան հաջորդ օրվանից, որով որոշված է ժամկետի ավարտը: 9. Եթե կոնկրետ իրավահարաբերությունը կարգավորող նորմատիվ իրավական ակտով սահմանված է ժամկետների հաշվարկման այլ կարգ, ապա տվյալ ակտով կարգավորվող իրավահարաբերությունների ժամանակ կիրառվում է այդ նորմատիվ իրավական ակտով սահմանված ժամկետների հաշվարկման կարգը: 10. Եթե ժամկետի հաշվարկը պայմանավորված է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությամբ պայմանավորված իրադարձության վրա հասնելու փաստով, ապա այդ մարմինը պարտավոր է իրադարձության վրա հասնելու մասին տեղեկատվությունը հրապարակել իր պաշտոնական ինտերնետային կայքէջում:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-4-րդ մասերի համաձայն՝ 1. Եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն: 2. Եթե այդ գործողությունը պետք է կատարվի որևէ կազմակերպությունում կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնում, ապա ժամկետը լրանում է այն ժամին, երբ այդ մարմնում կամ կազմակերպությունում սահմանված կանոններով դադարեցվում են համապատասխան գործառնությունները: 3. Մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված: 4. Եթե ժամկետի վերջին օրը ոչ աշխատանքային օր է, ապա ժամկետի ավարտի օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը:

Ավելին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 326-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ օրենքով, այլ իրավական ակտերով, գործարքով սահմանված կամ դատարանի նշանակած ժամկետը որոշվում է օրացուցային տարով, ամսով, ամսաթվով կամ տարիներով, ամիսներով, շաբաթներով, օրերով կամ ժամերով հաշվարկվող որոշակի ժամանակահատվածի ավարտով, իսկ 2-րդ կետի համաձայն՝ ժամկետը կարող է որոշվել նաև այն իրադարձության մատնանշմամբ, որն անխուսափելիորեն պետք է տեղի ունենա:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածի համաձայն՝ ժամանակահատվածով որոշվող ժամկետն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա և ամսաթվի կամ այն իրադարձության վրա հասնելու հաջորդ օրվանից, որով որոշված է ժամկետի սկիզբը:

Նշված նորմերի համակարգային վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգելու, որ գնումների մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ քաղաքացիական օրենսգրքից, Օրենքից և իրավական այլ ակտերից:

Հատկանշական է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանվել են այն դեպքերը, երբ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ սահմանվել է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Այսինքն՝ հիմք ընդունելով վերոգրյալը՝ արձանագրում եմ, որ ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված Կարգով պատվիրատուի կողմից տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր լիազորված մարմին ուղարկելու համար ժամկետը որոշել են տվյալ դեպքում Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերի ի հայտ գալու իրադարձության մատնանշմամբ, հետևաբար այդ օրվան հաջորդող օրվանից սկսվում է պատվիրատուի պարտավորությունը մասնակցի տվյալներն իրավասու մարմին հնգօրյա ժամկետում ուղարկելու վերաբերյալ:

Մինչդեռ, սույն գործի փաստերի համաձայն «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ի միջև թիվ ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-1/21-03/24 պայմանագիրը կնքվել է 2021թ. օգոստոսի 20-ին:

www.gnumner.am կայքում Պատվիրատուի կողմից հրապարակված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին հայտարարության մեջ նշվել է՝ Պայմանագրի հավելված 1-ում նշված մատակարարման ժամկետը՝ «Պայմանագրի ստորագրման օրվանից հաշված 210 օրվա ընթացքում» շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Պայմանագրի ստորագրման օրվանից հաշված 240 օրվա ընթացքում»:

Այլ կերպ՝ պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման վերջնաժամկետը սահմանվել է մինչև 2022թ. ապրիլի 17-ը ներառյալ:

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն 2022թ. մայիսի 13-ին թիվ Ե/13/1073-22 որոշմամբ /գրությամբ/ որպես 2021թ. օգոստոսի 20-ի թիվ ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-1/21-03/24 պայմանագրի միակողմանի լուծման հիմք նշել է՝ պայմանագրի 2.1.3 կետի բ/ ենթակետը:

Համաձայն թիվ ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-1/21-03/24 պայմանագրի 2.1.3 կետի բ/ ենթակետի՝ Պատվիրատուն իրավունք ունի Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Այսինքն, 2022թ. ապրիլի 18-ին Պատվիրատուի համար ի հայտ է եկել այն հանգամանքը, որ մասնակիցը «խախտել է» պայմանագրով նախատեսված պարտավորությունը կատարելու ժամկետը, սակայն Պատվիրատուն մասնակցի տվյալները լիազորված մարմնին ներկայացրել է միայն 24.05.2022թ., շուրջ՝ 1 ամիս 6 օր հետո:

Փաստորեն, Պատվիրատուն պարտավոր էր մասնակցի՝ Ընկերության, տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել լիազորված մարմին Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում, այսինքն՝ 2022 թվականի ապրիլի 18-ին հաջորդող հինգ աշխատանքային օրվանից սկսած մինչև 2022 թվականի ապրիլի 25-ը ներառյալ:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ Պատվիրատուն 13.05.2022թ. թիվ Ε/13/1073-22 որոշմամբ միակողմանի լուծել է 2021թ. օգոստոսի 20-ի թիվ ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-1/21-03/24 պայմանագիրը, սակայն անգամ այդ օրվանից սկսած 5 աշխատանքային օրյա ժամկետը չի պահպանել և մասնակցի տվյալները լիազորված մարմնին ուղարկել է 2022թ. մայիսի 13-ին հաջորդող 7-րդ աշխատանքային օրը:

Մինչդեռ, վերոգրյալ իրավական նորմերի համատեքստում հարկ եմ համարում փաստել, որ ՀՀ կառավարության որոշմամբ պատվիրատուի կողմից մասնակցի տվյալները լիազորված մարմնին ուղարկելու և համապատասխան գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար սահմանված ժամկետում համապատասխան ընթացակարգ չիրականացնելու դեպքում գործում է այն կանխավարկածը, որ համապատասխան մարմինները՝ պատվիրատուն և ՀՀ ֆինանսների նախարարությունը, զրկվում են այն հետագայում իրականացնելու հնարավորությունից, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ինչպես Օրենքով, այնպես էլ ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526 որոշմամբ որևէ այլ բացառություն սահմանված չէ:

Տեղին եմ համարում վկայակոչել նաև Ձեր՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ.Ներսիսյանի, թիվ ՍՑ-ՆԳ-2020/40 որոշումը, որով հայտնել եք հետևյալը՝ Ինչ վերաբերում է Ընկերության կողմից ներկայացված առարկությամբ վկայակոչված փաստերին, հարկ եմ համարում նշել հետևյալը. Ընկերությունը վկայակոչել է Կարգի 45-րդ կետը և նշել, որ Պատվիրատուի կողմից խախտվել են նշված կետով սահմանված ժամկետները, այնինչ՝ Պատվիրատուն 21.02.2020թ. միակողմանի լուծել է Պայմանագրերը և 24.02.2020թ. դիմել ՀՀ ֆինանսների նախարարին՝ առաջարկելով «Արամ-Շին 2007» ՍՊԸ-ի նկատմամբ կիրառել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը, այսինքն՝ Ընկերության այս դիտարկումը զուրկ է իրավական հիմնավորումից:

Այսինքն, Դուք՝ որպես գնումների հետ կապված բողոքներ քննող անձ, վերը նշված որոշմամբ արտահայտել եք այն դիրքորոշումը, որ 5 աշխատանքային օրյա ժամկետը պետք է հաշվարկել պայմանագիրը միակողմանի լուծելու օրվանից: Անգամ, եթե մի պահ հիմք ընդունենք նշված դիրքորոշումը, այլ կերպ՝ ժամկետի հաշվարկը կատարենք, ոչ թե ենթադրյալ խախտումն ի հայտ գալու օրվան հաջորդող օրվանից՝ 2022թ. ապրիլի 18-ից, այլ պայմանագիրը միակողմանի լուծելու օրվանից՝ 2022թ. մայիսի 13-ից, ապա միևնույն է Պատվիրատուն խախտել է օրենքով սահմանված ժամկետը, ինչը հիմք է «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ի նկատմամբ նախաձեռնված ընթացակարգը մերժելու համար:

Տեղին եմ համարում վկայակոչել նաև օրինական ուժի մեջ մտած թիվ ԵԴ/3822/02/20 և թիվ ԵԴ/21845/02/19 քաղաքացիական գործերը և խնդրել սույն գործով որոշում կայացնելիս հիմք ընդունել նաև դատարանների կողմից տրված իրավական մեկնաբանությունները:

ՀԻՄՔ 2

Ինչպես արդեն նշել եմ Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Կարգի վերը նշված կետի վերլուծությունից հետևում է, որ Կառավարության որոշմամբ Պատվիրատուի համար հստակ նախատեսվել է պարտականություն: Նշված պարտականությունը պահանջում է կատարել հետևյալ գործողությունները.

Պետք է առկա լինեն Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերը կամ դրանցից մեկը:

Տվյալ մասնակցի տվյալները պետք է ուղարկել լիազոր մարմնին:

Այդ տվյալների հետ պարտադիր պետք է ուղարկել նաև Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված համապատասխան հիմքը կամ հիմքերը:

Վերը նշված բոլոր գործողությունները միասին պետք է կատարել նշված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Ընդ որում, պարտականության բովանդակությունը կազմող վերը նշված էական պայմաններից մեկի բացակայությունը հանգեցնում է տվյալ պարտականության ոչ պատշաճ կատարման՝ իր հետևանքներով հանդերձ:

Տվյալ դեպքում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ի միջև թիվ ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-1/21-03/24 պայմանագիրը կնքվել է 2021թ. օգոստոսի 20-ին:

Նշված պայմանագրով ծառայությունների մատուցման վերջնաժամկետը սահմանվել է մինչև 2022թ. ապրիլի 17-ը ներառյալ:

2022թ. ապրիլի 17-ին «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ն մատուցված ծառայությունների ամբողջական փաթեթը հանձնել է Պատվիրատուին:

Այնուհետև 2022թ. մայիսի 13-ին Պատվիրատուն թիվ Ե/13/1073-22 որոշմամբ որոշել է միակողմանի լուծել 2021թ. օգոստոսի 20-ի «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ի միջև կնքված թիվ ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-1/21-03/24 պայմանագիրը:

2022թ. մայիսի 24-ին Պատվիրատուն թիվ Ե/13/1151-22 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ դիմումին կցելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված համապատասխան հիմքերը:

Մասնավորապես՝ Պատվիրատուն 2022թ. մայիսի 24-ի թիվ Ե/13/1151-22 գրությանը կցել է՝ 20.08.2021թ. կնքված թիվ ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-1/21-03/24 պայմանագիրը -12 էջ

Ե/13/1073-22 առ 13.05.2022թ. գրությունը -1 էջ

Տեղեկագրում հրապարակված լինելը հաստատող կայքից արտատպված փաստաթուղթը-1էջ

Տեղին է նկատել նաև, որ Պատվիրատուն 24.05.2022թ. թիվ Ε/13/1151-22 գրությամբ վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա/ենթակետը, ըստ որի՝ Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված ... պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը ...

Տվյալ դեպքում ՀՀ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը փաստացի հնարավորություն չունի գնահատել՝ արդյո՞ք մասնակիցը խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունները, թե ոչ, եթե այո, ապա ինչո՞ւմն է դրսևորվել խախտումը, արդյո՞ք խախտումն էական է, թե ոչ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նման հնարավորություն չունի, քանի որ Պատվիրատուն չի ներկայացրել Մասնակցի կողմից Պայմանագրով սահմանված ժամկետում Պատվիրատուին ներկայացված ծառայության արդյունքը, անգամ չի ներկայացրել պայմանագրով նախատեսված ժամկետը երկարաձգելու հայտարարությունը՝ տպավորություն ստեղծելով, թե մասնակիցը խախտել է ծառայության կատարման ժամկետները:

Այլ կերպ ասած՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու հիմնական պայմանը՝ պայմանագրով նախատեսված պարտավորության խախտումն է, իսկ ածանցյալ պայմանը, կամ որ նույն է հետևանքը՝ պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծելու հանգամանք, ուստի որպեսզի ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը ստուգի արդյոք մասնակիցը թույլ է տվել պայմանագրով նախատեսված պարտավորության խախտում, Պատվիրատուն պարտավոր էր օրենքով սահմանված 5 աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալների հետ միասին ներկայացնել նաև համապատասխան բոլոր հիմքերը, ինչը սակայն չի կատարել, իսկ պայմանագիրը լուծելու մասին որոշումը դեռևս չի խոսում պարտավորության խախտման մասին:

Այստեղ տեղին եմ համարում նաև նշել, որ ո՛չ Պատվիրատուն և ո՛չ ՀՀ ֆինանսների նախարարությունը այլևս չեն կարող ներկայացնել նոր հիմքեր, քանի որ կարձանագրվի Կառավարության 45-րդ կետի պահանջի խախտում:

Այս համոզմունքի համար հիմք է հանդիսանում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԵԴ/33661/02/20 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ «Մինչդեռ Դատարանի վերը նշված վերլուծություններից բխում է, որ մասնակցի

տվյալների հետ միասին պատվիրատուն պարտավոր էր լիազոր մարմնին ուղարկել նաև համապատասխան հիմքերը, և քանի դեռ լիազոր մարմնին մասնակցի տվյալների հետ միաժամանակ՝ մեկ փաթեթով, չեն ուղարկվել նաև համապատասխան հիմքերը, համարվում է, որ Կարգի 45-րդ կետի պահանջը կատարվել է մասնակի, այսինքն՝ այն մասնակի խախտվել է: … Մինչդեռ Դատարանի վերը նշված վերլուծություններից բխում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, պարտավոր էր ուղարկել լիազորված մարմին, ինչպիսի պարտականությունը վերջինս կատարել է լիարժեք՝ միայն 03.02.2020 թվականին, այսինքն՝ պարտականությունը լիարժեք կատարվել է Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետի ակնհայտ խախտմամբ: Դատարանն արձանագրում է, որ Կարգի 45-րդ հոդվածով պատվիրատուի համար սահմանված պարտականության պատշաճ կատարման համար անհրաժեշտ պայմանների միաժամանակյա առկայությունը չապահովվելը հիմք է եզրակացնելու, որ պարտականությունը կատարված է թերի, ինչն էլ հանգեցնում է պարտականության խախտման, քանի որ հիմնավորվել է, որ մասնակցի մասին տվյալների հետ միասին պատվիրատուն լիազոր մարմնին Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետում չի ուղարկել համապատասխան հիմքերը ևս:
… Այս կապակցությամբ Դատարանը հավելյալ նշում է, որ Կարգի 45-րդ կետի կանոնների խախտման փաստը պարզելու համար էական են ոչ թե Բողոքներ քննող անձի պահանջով ստացված տեղեկությունները, այլ՝ նշված կարգի կիրառմամբ պատվիրատուի կողմից կատարված գործողությունները և դրանք իրականացված լինելու ժամկետը, հետևաբար բոլոր այն գործողությունները, որոնք կատարվել են Բողոքներ քննող անձի կողմից բողոքի քննության շրջանակներում, այլևս էական նշանակություն չունեն Կարգի 45-րդ կետի պահանջների պահպանման տեսանկյունից, քանի որ Բողոքներ քննող անձի կողմից իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում բողոքի քննության արդյունքում իրականացված գործողություններով չեն կարող վերացվել այն թերությունները, որոնք առկա են եղել բողոքն ընդունելու ժամանակ և ուղղվել են միայն բողոքի քննության ընթացքում: Դատարանի նման եզրահանգումը բխում է այն տրամաբանությունից, որը դրված է Կարգի 45-րդ կետում, քանի որ Կարգի այլ կետերով կամ Օրենքով սահմանված հիմքով նախատեսված չէ այդ թերությունները վերացնելու կամ սահմանված հնգօրյա ժամկետի բացթողումը հարգելի համարելու և այն վերականգնելու որևէ իրավական հնարավորություն: Վերը նշվածների հիման վրա

Դատարանը գտնում է, որ Բողոքներ քննող անձի կողմից որոշման հիմքում Կարգի 45-րդ կետի դրույթների պահպանման վերաբերյալ դրված եզրահանգումն իրավաչափ չէ, չի բխում նշված Կարգի պահանջներից, այնտեղ սահմանված պայմանների միաժամանակյա առկայության անհրաժեշտությունից և իրավաստեղծ մարմնի կողմից դրանցից յուրաքանչյուրի հետ կապված նպատակներից: Ընդ որում, չկա իրավական որևէ հնարավորություն շտկելու այն թերությունները, որոնք առկա են եղել բողոքի ընդունման ժամանակ, քանի որ հիմքերի հետ միասին մասնակցի տվյալների ներկայացման ժամկետի հոսքը չի կասեցվում կամ ընդհատվում կամ այդ ժամկետը չի վերականգնվում բողոքի քննության ընթացքում կամ արդյունքներով: Հետևաբար Դատարանը գտնում է, որ Բողոքներ քննող անձի կայացրած որոշումը այս հիմքով ևս իրավաչափ չէ, քանի որ պետք է արձանագրվեր Կարգի 45-րդ կետի խախտում, ինչն էլ պետք է հանգեցներ Հայցվորին Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված հիմքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու լիազոր մարմնի նախաձեռնած ընթացակարգի մերժման»:

Ամփոփելով վերոգրյալն արձանագրում եմ, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ամբողջական տարբերակով մասնակցի տվյալների հետ միաժամանակ լիազոր մարմնին ուղարկելն ինքնանպատակ կանոն չէ, քանի որ այն ենթադրում է, որ քանի դեռ չկան հիմքեր կամ այդ հիմքերը թերի են, միայն մասնակցի տվյալները և պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշումն լիազոր մարմնին ներկայացնելն այլևս ինքնանպատակ է, ավելին՝ հիմքերը մասնակցի տվյալների հետ միասին լիազոր մարմնին ներկայացնելն ունի նաև հնարավոր չարաշահումներից խուսափելու նպատակ, քանի որ մասնակցի տվյալները ներկայացնելով՝ պետք է միաժամանակ փաստվի նման գործողությունը կատարելու օրինական հիմքերի գոյությունը և բացառվի առանց հիմքերի անձին հնարավոր պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը, ավելին՝ մասնակցին պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ հիմքերը պետք է առկա լինեն մասնակցի տվյալների մասին գրավոր տեղեկատվության ներկայացման պահին, քանի որ այդ կանոնի ամրագրմամբ իրավաստեղծը նպատակ է հետապնդել ապահովել լրացուցիչ երաշխիք՝ համոզվելու, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերը հետո չեն ստեղծվել և Կարգի 45-րդ կետով սահմանված կարգով ներկայացվելու պահին պատվիրատուի մոտ դրանք արդեն իսկ առկա են եղել, ինչից էլ հետևում է, որ

սույն գործով Պատվիրատուի կողմից թերի ներկայացված հիմքերը չեն կարող լրացվել, իսկ այս թերի հիմքերի պայմաններում հնարավոր չէ հաստատված համարել մասնակցի կողմից պայմանագրով նախատեսված պարտավորության խախտման հիմքը:

Հիմք 3

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն 2022թ. մայիսի 13-ին թիվ Ե/13/1073-22 որոշմամբ որպես 2021թ. օգոստոսի 20-ի թիվ ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-1/21-03/24 պայմանագրի միակողմանի լուծման հիմք նշել է՝ պայմանագրի 2.1.3 կետի բ/ ենթակետը:

Համաձայն թիվ ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-1/21-03/24 պայմանագրի 2.1.3 կետի բ/ ենթակետի՝ Պատվիրատուն իրավունք ունի Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Տվյալ դեպքում, ինչպես արդեն նշել եմ մասնակիցը՝ «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ – ն, պայմանագրով նախատեսված ծառայության արդյունքը՝ ծրագրի մշակված տարբերակը, Պատվիրատուին հանձնել է 2022թ. ապրիլի 17-ին, այսինքն, առկա չէ պայմանագրով նախատեսված ժամկետի որևէ խախտում:

Անհասկանալի է, թե ի՞նչ է ի նկատի ունեցել Պատվիրատուն, երբ նշել է, որ մասնակիցը թույլ է տվել պայմանագրով նախատեսված ժամկետի խախտում, այն դեպքում, երբ ժամկետում մատուցվել է ծառայությունը: Եթե Պատվիրատուն գտնում էր, որ մասնակցի կողմից մատուցված ծառայությունը ենթադրաբար չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին, ապա այդ դեպքում էլ պարտավոր էր պայմանագիրը լուծել ոչ թե 2.1.3 կետի բ/ ենթակետով, այլ ա/ ենթակետով:

Այս պահին անհրաժեշտություն չեմ գտնում անդրադառնալ մատուցված ծառայությունների պատշաճ որակին՝ հիմնավորելով, որ մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին, քանի որ Պատվիրատուն պայմանագիրը միակողմանի լուծելու հիմք դիտել է ոչ թե մատուցված ծառայության ոչ պատշաճ լինելու հանգամանքը, այլ ժամկետի խախտումը, այնինչ պնդում եմ, որ Պատվիրատուն օրենքով սահմանված ժամկետում մատուցել է պայմանագրով նախատեսված ծառայությունը և ծառայության արդյունքը 2022թ. ապրիլի 17-ին հանձնել է Պատվիրատուին/ապացույցը կցվում է/:

Այսինքն նաև այս հիմքով անհիմն «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ի նկատմամբ նախաձեռնված ընթացակարգը:

Հիմք 4

Ինչպես հայտնի է Ձեր կողմից «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ին (պատվիրատու՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ, ծածկագիր՝ «ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-1/21-03/24» ծածկագրով գնման պայմանագիր) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի քննության նպատակով 03.06.2022թ. ժամը 11:35-ին հրավիրվել էր նիստ:

Դիմում էի ներկայացրել Ձեզ, որով խնդրել էի հետաձգել 03.06.2022թ. ժամը 11:35-ին նշանակված նիստը, որպեսզի կարողանամ պատշաճ կարգով ներկայացնեմ վստահորդիս շահերը:

Դիմումին կից ներկայացրել էի նաև «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ի կողմից ինձ տրված ռուսերեն լիազորագիրը:

03.06.2022թ. ժամը 11:35-ին հրավիրված նիստի ընթացքում՝ ուսումնասիրելով իմ կողմից ներկայացված միջնորդությունը, հայտնել եք՝ նշեմ, որ Ընկերության ներկայացուցիչ Ա. Արզումանյանի կողմից ներկայացվել է միջնորդություն նիստը հետաձգելու վերաբերյալ: Ուսումնասիրելով ներկայացված միջնորդությունը և միջնորդությամբ տրամադրված փաստաթղթերը, միջնորդությունը նիստը հետաձգելու վերաբերյալ մերժվում է, քանի որ որպես ներկայացուցիչ հանդիսանալու վերաբերյալ ուղարկվել է «доверенность» անվանմամբ օտարալեզու փաստաթուղթ: Հաշվի առնելով վերոգրյալը գտնում եմ, որ լիազորագիրը ներկայացված է ոչ պատշաճ, որպիսի պայմաններում վերջինիս կողմից ներկայացված միջնորդությունը մերժվում է: https://www.youtube.com/watch?v=lEn8o4QLqC4:

Ձեր կողմից կայացրած որոշումից ինձ համար առնվազն պարզ է դարձել, որ Դուք՝ որպես ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ, չեք ընդունում օտարալեզու ոչ մի փաստաթուղթ, ինչն էլ հիմք ընդունելով 13.06.2022թ. նիստին ներկայացնում եմ «доверенность» անվանմամբ օտարալեզու փաստաթղթի պատշաճ թարգմանությունը:

Միևնույն ժամանակ Պատվիրատուի կողմից ներկայացված նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ որպես Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված համապատասխան հիմքեր, Պատվիրատուի կողմից ներկայացվել է «договор закупки» անվանմամբ օտարալեզու փաստաթուղթ և 2022թ. մայիսի 13-ի թիվ E/13/1073-22 օտարալեզու փաստաթուղթ:

Իրավահարաբերության պահին գործող Օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն անշահախնդիր և անկախ քննություն

իրականացնող մարմին է, որը շահագրգռված չէ կոնկրետ գնումների գործընթացի արդյունքներով և իր պարտականությունների ու իրավունքների կատարման ժամանակ պաշտպանված է արտաքին ազդեցություններից: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքներն ուսումնասիրում է պատշաճ մանրամասնությամբ և անաչառորեն: Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքով նախատեսված լիազորություններն իրականացնելիս անկախ է գնման գործընթացի մասնակիցներից, այդ թվում՝ պատվիրատուներից, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից ու պաշտոնյաներից և պարտավոր է ղեկավարվել բացառապես գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և կիրառել այն:

Նկատի ունենալով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի անշահախնդրությունը, անկողմանկալությունն ու անաչառությունը, ինչպես նաև հիմք ընդունելով սույն ընթացակարգի քննության շրջանակում օտարալեզու փաստաթղթերի մասով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի դրսևորած վարքագիծն ու վերաբերմունքը, գտնում եմ, որ քանզի Պատվիրատուն չի ներկայացրել «договор закупки» անվանմամբ օտարալեզու փաստաթղթի և 2022թ. մայիսի 13-ի թիվ Е/13/1073-22 օտարալեզու փաստաթղթի պատշաճ թարգմանությունները, ուստի ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հնարավորություն չունի գնահատելու ներկայացված փաստաթղթերի իրավաչափությունը և Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերը:

Այստեղ հատուկ շեշտում եմ, որ Պատվիրատուն չի կարող լրացնել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված համապատասխան հիմքերը և ներկայացնել նշված փաստաթղթերի պատշաճ թարգամանությունները, քանի որ կստացվի, որ Պատվիրատուն օրենքով սահմանված ժամկետների խախտմամբ է ներկայացնում համապատասխան հիմքերը՝ չնայած պնդում եմ, որ միևնույն է, Պատվիրատուն, այսպես թե այնպես, արդեն իսկ խախտել է Կարգի 45-րդ կետով նախատեսված ժամկետները:

Ամփոփելով վերոգրյալը գտնում եմ, որ վերը նշված 1-4 հիմքերը ինչպես առանձին-առանձին այնպես էլ բոլորը միասին վերցված լրիվ բավարար են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված ընթացակարգը մերժելու համար:

Մատնանշածս հանգամանքների հիմքով խնդրում եմ ամբողջությամբ մերժել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ի նկատմամբ նախաձեռնված ընթացակարգը:

Ի լրումն վերը նշված դիրքորոշման Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի քննության շրջանակում 13.06.2022թ. հրավիրված նիստի ընթացքում պարտավորվել եմ ներկայացնել ապացույց, առ այն, որ «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ն «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին ներկայացրել է թիվ ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-1/21-03/24 պայմանագրով նախատեսված ծառայության արդյունքը:

Հայտնում եմ, որ թիվ ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-1/21-03/24 պայմանագրով ծառայությունը կայացել է հետևյալում՝ «ՋՋԷՌ-440 (Վ-270) տիպի ռեակտորային կայանքով Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի սարքավորումների և խողովակաշարերի հիմնական մետաղի, եռակցվածքների եվ մակահալվածքների վիճակի՝ շահագործման երկարացված ժամկետի ընթացքում շահագործական վերահսկման տիպային ծրագրի մշակում» ծառայություն:

Թիվ ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-1/21-03/24 պայմանագրով ծառայության մատուցման վերջնաժամկետը համարվել է 2022թ. ապրիլի 17-ը, որը հանդիսացել է ոչ աշխատանքային՝ կիրակի օր:

Լրացուցիչ հայտնում եմ նաև, որ թիվ ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-1/21-03/24 պայմանագրի շրջանակում «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ի կողմից մշակված ծրագիրը կազմված է եղել 226 էջից: Կարծում եմ անհրաժեշտություն չկա երկար-բարակ հիմնավորելու, որ էլեկտրոնային եղանակով 226 էջը սկզբում սկանավորելը, իսկ հետո նաև՝ էլեկտրոնային փոստում ներբեռնելը և ուղարկելը պահանջում են բավականին երկար ժամանակ, ուստի «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ն ստիպված այդ փաստաթղթերը կարողացել է Պատվիրատուին ուղարկել միայն 19.04.2022թ.:

Օբյեկտիվ իրականության մեջ միգուցե «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ն թույլ է տվել 1 օրյա ժամկետի խախտում, բայց խնդրում եմ այդ ժամկետը համարել հարգելի, քանի որ նախ՝ 226 էջ փաստաթուղթը մեկ օրվա ընթացքում հնարավոր չէր սկանավորել, ներբեռնել փոստի մեջ և ուղարկել ու բացի այդ, եթե նույնիսկ այդ խախտումն առկա է, սակայն ծառայությունը փաստացի մատուցված է, դա չպետք է բերի նրան, որ անձը 2 տարի ժամկետով մեկ օրյա խախտման համար ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում:

Տեղին եմ համարում նշել նաև, որ նիստի ընթացքում անգամ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն է նշել, որ եթե մասնակիցը ծառայությունը մատուցել է, սակայն տեղի է ունեցել որոշակի ժամկետի խախտում, ապա ՀՀ գնումների հետ կապված

բողոքներ քննող անձը դա չի դիտարկում որպես այնպիսի հիմք, որը կհանգեցնի մասնակցի նկատմամբ նմանատիպ կոշտ սանկցիայի կիրառման:

Հատուկ ցանկանում եմ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունը հրավիրել նաև այն հանգամանքի վրա, որ «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ն դասվում է նախկին ԽՍՀՄ-ի այն հազվագույտ կազմակերպությունների շարքին, որոնք կարողանում են նմանատիպ ծրագրեր մշակել ատոմակայանների համար:

Մատնանշածս հանգամանքների հիմքով ևս մեկ անգամ խնդրում եմ ամբողջությամբ մերժել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ի նկատմամբ նախաձեռնված ընթացակարգը»:

Ընկերությունը 28.06.2022թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի քննության շրջանակում գրավոր կարգով ներկայացրել եմ առարկություն, ինչպես նաև համապատասխան ախպացույցներ, առ այն, որ պայմանագրով սահմանված ժամկետում ծառայության արդյունքը հանձնվել է Պատվիրատուին, իսկ Պատվիրատուն այն ստացել է:

Նիստից հետո ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը պահանջել է նաև թղթային տարբերակով ներկայացնել ծառայության արդյունքը, այլ կերպ՝ «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ի կողմից մշակված ծրագիրը:

Նշվածի վերաբերյալ հայտնում եմ, որ մշակված ծրագրի բնօրինակ փաստաթղթերը ստորագրված և կնքված վիճակում, թղթային տարբերակով «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ն փոստով ուղարկել է Պատվիրատուին և այս պահի դրությամբ այդ փաստաթղթերի թղթային տարբերակը գտնվում է Պատվիրատուի մոտ, իսկ Ընկերության մոտ այլևս օրինակ չի մնացել:

Ես՝ որպես «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին հայտնել եմ, որ այդ փաստաթղթերը կարող եմ ներկայացնել էլեկտրոնային եղանակով, սակայն Գնումների հետ կապված բողոքն քննող անձը հայտնել է, որ գործին կցելու համար փաստաթղթերը պետք է ներկայացվեն թղթային տարբերակով:

Հարգելի Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ, հայտնել և հայտնում եմ, որ սույն ընթացակարգի շրջանակում Պատվիրատուն պնդում է, որ մասնակիցը խախտել է ծառայության կատարման ժամկետը, դրան հակառակ, մասնակցի կողմից Ձեզ է

ներկայացվել ապացույցներ, առ այն, թե երբ է ծառայության արդյունքը հանձնվել Պատվիրատուին, ուստի Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն ընդամենը պետք է գնահատի առկա է արդյոք ծառայության մատուցման ժամկետի խախտում, թե՝ ոչ:

Չնայած վերևում արդեն հայտնել եմ, որ «ՌուսԱտոմէկսպերտիզա» ՍՊԸ-ն մշակված ծրագրի բնօրինակը' կնքված և ստորագրված տարբերակով ուղարկել է Պատվիրատուին և այս պահին թղթային տարբերակով այլևս օրինակ առկա չէ վերջինս տիրապետման ներքո, բայց նաև հայտնում եմ, որ Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված համապատասխան հիմքը կամ հիմքերը հիմնավորելու պարտավորությունը կրում է ոչ թե մասնակիցը, այլ Պատվիրատուն, ուստի Պատվիրատուի անգործության բացասական հետևանքները պետք է կրի հենց Պատվիրատուն:

Ավելին, սույն դեպքում Պատվիրատուն որպես պայմանագիրը միակողմանի լուծման հիմք դիտարկում է ոչ թե այն, որ մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին, այլ այն, որ ծառայությունը մատուցվել է պայմանագրով նախատեսված ժամկետի խախտմամբ: Եթե Պատվիրատուն չի պնդում և ոչ էլ ապացուցում, որ մատուցվել է որ պատշաճ ծառայություն, ապա ինչը հերքի մասնակիցը: Դեռ ավելին, անգամ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը չի կարող դուրս գալ պատվիրատուի ներկայացրած փաստերի շրջանակից ու սկսի գնահատել ներկայացված ծառայության որակը, եթե այդ Պատվիրատուն չի ներկայացրել որևէ առարկություն:

Ամփոփելով վերոգրյալը ևս մեկ անգամ խնդրում եմ ամբողջությամբ մերժել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «ՌուսԱտոմէկսպերտիզա» ՍՊԸ-ի նկատմամբ նախաձեռնված ընթացակարգը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/213 ընթացակարգի շրջանակներում 13.06.2022թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է ներկայացված դիրքորոշումը:

3. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 24.05.2022թ. թիվ Ε/13/1151-22 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար «ՋՋԷՌ-440 (Վ-270) տիպի ռեակտորային կայանքով Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի սարքավորումների և խողովակաշարերի հիմնական մետաղի, եռակցվածքների և մակահալվածքների վիճակի՝ շահագործման երկարացված ժամկետի ընթացքում շահագործական վերահսկման տիպային ծրագրի մշակում» ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «РусАтомЭкспертиза» ООО-ի միջև 2021թ. օգոստոսի 20-ին կնքվել է ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-1/21-03/24 պայմանագիրը՝ 15.000.000 ռուբլի (առանց ԱԱՀ) ընդհանուր գնով, որը «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից միակողմանի լուծվել է՝ պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետի համաձայն:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի ա. պարբերության և ՀՀ կառավարության 526-Ն որոշման 45-րդ կետի պահանջներով, Ձեզ ենք ներկայացնում մասնակցի տվյալները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/213 ընթացակարգի շրջանակներում 13.06.2022թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/213 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/213 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «РусАтомЭкспертиза» ООО-ի միջև 20.08.2021թ. կնքվել է «ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-1/21-03/24» ծածկագրով ծառայությունների մատուցման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար «ՋՋԷՌ-440 (Վ-270) տիպի ռեակտորային կայանքով Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի սարքավորումների և խողովակաշարերի հիմնական մետաղի, եռակցվածքների և մակահալվածքների վիճակի՝ շահագործման երկարացված ժամկետի ընթացքում շահագործական վերահսկման տիպային ծրագրի մշակում» ծառայությունների

մատուցման պարտավորությունը՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

2. Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ «Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համախատասխան և նախատեսված ժամկետներով»:

3. Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով՝ ծառայության մատուցման ժամկետ է սահմանվել Պայմանագրի ստորագրման օրվանից 210 օրվա ընթացքում:

4. Պայմանագրում կատարված փոփոխությունների համաձայն՝ ծառայության մատուցման ժամկետ է սահմանվել Պայմանագրի ստորագրման օրվանից 240 օրվա ընթացքում:

5. Պատվիրատուն «РусАтомЭкспертиза» ООО-ին ուղղված 13.05.2022թ. թիվ Е/13/1073-22 գրությամբ հայտնել է հետևյալը.

««ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար «ՋՋԷՌ-440 (Վ-270) տիպի ռեակտորային կայանքով Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի սարքավորումների և խողովակաշարերի հիմնական մետաղի, եռակցվածքների և մակահալվածքների վիճակի՝ շահագործման երկարացված ժամկետի ընթացքում շահագործական վերահսկման տիպային ծրագրի մշակում» ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «РусАтомЭкспертиза» ООО-ի միջև 2021թ. օգոստոսի 20-ին կնքված ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-1/21-03/24 պայմանագիրը «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից միակողմանի լուծվել է՝ պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետի համաձայն...»:

6. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 18.05.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին ծանուցումը:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 31.05.2022թ. թիվ 26/26-1/9965-2022 գրությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 24.05.2022թ. թիվ Е/13/1151-

22 գրությունը՝ կից փաստաթղթերով, Ընկերության կողմից ներկայացված դիրքորոշումը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «РусАтомЭкспертиза» ООО-ի միջև 20.08.2021թ. կնքվել է «ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-1/21-03/24» ծածկագրով ծառայությունների մատուցման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար «ՋՋԷՌ-440 (Վ-270) տիպի ռեակտորային կայանքով Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի սարքավորումների և խողովակաշարերի հիմնական մետաղի, եռակցվածքների և մակահալվածքների վիճակի՝ շահագործման երկարացված ժամկետի ընթացքում շահագործական վերահսկման տիպային ծրագրի մշակում» ծառայության մատուցման պարտավորությունը՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ «Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և նախատեսված ժամկետներով:

Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով՝ ծառայության մատուցման ժամկետ է սահմանվել Պայմանագրի ստորագրման օրվանից 210 օրվա ընթացքում:

Պայմանագրում կատարված փոփոխությունների համաձայն՝ ծառայության մատուցման ժամկետ է սահմանվել Պայմանագրի ստորագրման օրվանից 240 օրվա ընթացքում:

Պատվիրատուն «РусАтомЭкспертиза» ООО-ին ուղղված 13.05.2022թ. թիվ E/13/1073-22 գրությամբ հայտնել է հետևյալը.

««ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար «ՋՋԷՌ-440 (Վ-270) տիպի ռեակտորային կայանքով Հայկական ԱԷԿ-ի թիվ 2 էներգաբլոկի սարքավորումների և խողովակաշարերի հիմնական մետաղի, եռակցվածքների և մակահալվածքների վիճակի՝ շահագործման երկարացված ժամկետի ընթացքում շահագործական վերահսկման տիպային ծրագրի մշակում» ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «РусАтомЭкспертиза» ООО-ի միջև 2021թ. օգոստոսի 20-ին կնքված ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-1/21-03/24 պայմանագիրը «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից միակողմանի լուծվել է՝ պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետի համաձայն...»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 18.05.2022թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 2.1.3-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: ***Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝***

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ պարտավորությունները ծագում են պայմանագրից, հետևաբար՝ պայմանագրով էլ սահմանվում են պարտավորությունները կատարելու կարգն ու ժամկետները և դրանց մասով խախտումներն էական համարվելու պայմաններն ու դեպքերը:

Օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

Վերը շարադրվածի հաշվառմամբ արձանագրում եմ, որ «РусАтомЭкспертиза» ООО-ն խախտել է իր և «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի միջև 20.08.2021թ. կնքված թիվ «ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-1/21-03/24» ծածկագրով պայմանագրով ստանձնած պարտավորությունն, այն է՝ Պայմանագրով սահմանված ժամկետում ծառայությունը մատուցելը, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «РусАтомЭкспертиза» ООО-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցերի ցուցակում ներառելու հիմքերը:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից ներկայացված առարկությամբ վկայակոչված փաստերին, հարկ եմ համարում նշել հետևալը.

Ընկերությունը վկայակոչել է Կարգի 45-րդ կետը և նշել, որ Պատվիրատուի կողմից խախտվել է նշված կետով սահմանված ժամկետը, մասնավորապես հայտնելով, որ Պատվիրատուն պարտավոր էր մասնակցի՝ Ընկերության, տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել լիազորված մարմին Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում, այսինքն՝ 2022 թվականի ապրիլի 18-ին հաջորդող հինգ աշխատանքային օրվանից սկսած մինչև 2022 թվականի ապրիլի 25-ը ներառյալ, և որպես վերոնշվածի հիմնավորում նշել է, որ նմանատիպ իրավական դիրքորոշում հայտնվել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ՍՑ-ՆԳ-2020/40 գործով կայացված որոշմամբ, սույն մասով հայտնում եմ, որ նման պնդումն անհիմն է, քանի որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից կայացված թիվ ՍՑ-ՆԳ-2020/40 որոշմամբ, նման դիրքորոշում՝ Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետի հոսքի սկիզբը ճիշտ հաշվարկելու վերաբերյալ, չի հայտնվել:

Անդրադառնալով Ընկերության այն պնդմանն, որ Պատվիրատուի կողմից խախտվել է Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետը, քանի որ Պատվիրատուն պարտավոր էր մասնակցի՝ Ընկերության, տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել լիազորված մարմին Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում, այսինքն՝ 2022 թվականի ապրիլի 18-ին հաջորդող հինգ աշխատանքային օրվանից սկսած մինչև 2022 թվականի ապրիլի 25-ը ներառյալ, այսինքն՝ ըստ Ընկերության նախքան պայմանագիրը լուծելը, քանի որ Պայմանագիրը լուծվել է 13.05.2022թ.-ին, արձանագրում եմ, որ նման պնդումն անհիմն է, հետևյալ հիմնավորմամբ.

Կարգի 45-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքը տվյալ դեպքում հանդսիանում է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետը, այն է՝ պայմանագրով նախատեսված պարտավորության խախտումն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ընդ որում՝ «Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: ***Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:*** Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Անդրադառնալով Կարգի 45-րդ կետով և 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված ընթացակարգային ժամկետի պահպանման և ժամկետի հոսքի սկիզբը ճիշտ հաշվարկելու իրավաստեղծ մարմնի նպատակին՝ պետք է արձանագրել, որ այն չի կարող ինքնանպատակ լինել, քանի որ ցանկացած տնտեսավարող սուբյեկտ, ում հետ կնքված պայմանագրի լուծման հետևանքով պայմանագրի մյուս կողմը հիմքերը կարող է ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու համար, ունի լեգիտիմ ակնկալիք առ այն, որ այդպիսի գործընթաց չի նախաձեռնվի իր նկատմամբ այնքան ժամանակ, քանի դեռ ինքը պատշաճ չի ծանուցվել պայմանագրի միակողմանի լուծման մասին, այսինքն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված ***հիմքերն ի հայտ են գալիս*** Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ***ծանուցումը Տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից***, երբ Պայմանագիրը կնքած անձը համարվում է ***պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված***, այլ ոչ թե՝ Պայմանագրով նախատեսված ժամկետը լրանալու օրվան հաջորդող օրվանից կամ պայմանագիրը լուծելու օրվանից, ինչպես պնդում է Ընկերությունը ներկայացված առարկությամբ:

Այսպիսով՝ Պատվիրատուի կողմից Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին ծանուցումը հրապարակվել է Տեղեկագրում 18.05.2022թ.-ին, իսկ Պատվիրատուն Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով թիվ ***Ե/13/1151-22***

գրությամբ ուղարկել է լիազորված մարմնին ***<u>24.05.2022թ.</u>***, որպիսի պայմաններում արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից պահպանվել է Կարգի 45-րդ կետով սահմանված իմպերատիվ դրույթը՝ այն է հինգ աշխատանքային օր ժամկետը:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից վկայակոչված հետևյալ հանգամանքին. «Օբյեկտիվ իրականության մեջ միգուցե «ՌուսԱտոմԷկսպերտիզա» ՍՊԸ-ն թույլ է տվել 1 օրյա ժամկետի խախտում, բայց խնդրում եմ այդ ժամկետը համարել հարգելի, քանի որ նախ՝ 226 էջ փաստաթուղթը մեկ օրվա ընթացքում հնարավոր չէր սկանավորել, ներբեռնել փոստի մեջ և ուղարկել ու բացի այդ, եթե նույնիսկ այդ խախտումն առկա է, սակայն ծառայությունը փաստացի մատուցված է, դա չպետք է բերի նրան, որ անձը 2 տարի ժամկետով մեկ օրյա խախտման համար ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում՝ ներկայացնելով Պատվիրատուին էլեկտրոնային փոստի միջոցով 19.04.2022թ. ուղարկված գրությունը, որտեղ վերջինս հայտնում է, որ կից ներկայացնում է ծառայության արդյունքը», ապա ուսումնասիրելով Ընկերության կողմից ներկայացված գրությունն, ինչպես նաև 19.04.2022թ. Պատվիրատուին ուղարկված էլեկտրոնային փոստի արտատպումներն, արձանագրում եմ, որ ներկայացված գրությունը և էլեկտրոնային փոստի արտատպումները բավարար հիմք չեն ապացուցված համարելու Ընկերության կողմից Պայմանագրի շրջանակներում ծառայությունը մատուցելու փաստը, քանի որ ծառայությունը Պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու փաստը ապացուցվում է միայն գնման պայմանագիրը կնքած անձի և Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությամբ, այն է՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 108-րդ կետի համաձայն՝ Պայմանագրի կատարման նկատմամբ նախնական հսկողությունն իրականացնում է պատասխանատու ստորաբաժանումը: ***<u>Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ,</u>*** որի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը:

Մինչդեռ՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը գործի քննության ընթացքում չի ներկայացրել հանձնման-ընդունման արձանագրություն, որի պայմաններում միայն

ապացուցված կհամարվեր Ընկերության այն պնդումն, որ ծառայությունը փաստացի մինչև Պայմանագիրը լուծելն Ընկերության կողմից մատուցվել է:

Ամփոփելով վերը շարադրվածը, արձանագրում եմ, որ Ընկերության կողմից վկայակոչված փաստերն անհիմն են:

Հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 31.05.2022թ. թիվ 26/26-1/9965-2022 գրությամբ «РусАтомЭкспертиза» ООО-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «РусАтомЭкспертиза» ООО-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**